

ԻՏԱԼԱԿԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ



Ամբողջ իտալական թերակղզին Ուղի-
նէէն մինչև Մարասալ, պահ մը իր ներ-
քին քաղաքական պատակառումները հաշ-
տեցնելով Երրորդ իտալիոյ Միութեան և
Անկախութեան փառաւոր յիսնամակը կը
սունէ այս տարի:

Վերջին հարկւրամեակին մէջ տեղի ու-
նեցած իտալ պատմական դէպքերը թերևս
մերայնոց շատերուն անծանօթ է:

Այս չնաշխարհիկ երկրին արդի բար-
գաւած վիճակը, նարտարուեստի մէջ կա-
տարած հակայաջայլ յառաջդիմութիւնը,
Միծ Ազգաց Յանկին պատկան՝ վերջապէս
երբեակ նիգակակցութեան և երբեակ հա-
մաձայնութեան միջև լծորդ օղակ կազմող
իտալիոյ ինքնազատութեան հակայ գործը
մի քանի տարիներու արդիւնք չէ:

Մեծն Նաբոլէոնի անկումէն յետոյ ծը-
նունդ կ'առնեն անոր անկախութեան ի
նպաստ յուզուած խլրտումները:

Կառքոնաօր կոչուած ընկերութիւն մը
արդէն 1815 թուականին գաղտնաբար կը
գործէր օտար տիրապետութեանց լուծը
թօթափելու նպատակով:

Ազատութեան դարերին նահատակ քա-
նիներ այս կերպով զոհուեցան, ոմանք
վերին իտալիոյ տիրապետող Աւստրիոյ դէմ
և այլք՝ հարաւը բռնաբարող Բոլորոնաց
թիոյ վարչութեան դէմ ախոյեան կանգ-
նելով:

Տարիներ հարկ եղան որպէս զի կառ-
բոնաօրք, զարերով ստրկացեալ, Միջին-
դարէն պատառուն իտալական քարտէսին
վրայ տարածուելով ամենուրեք ազատ կեն-
ցաղի մը քաղցրիկ սերմը ցանէին՝ Անկա-
խութեան հոգին, բռնակալութեան դէմ
ընդվզումի սկզբունքը քարոզելով, ընկ-
նեալ իտալացւոյն մտքին մէջ համոզումը
գոյացնէին թէ ինքնիշխան իտալիա մը
կարելի էր կազմել:

Չիոս Մենտտի և Վինչենցօ Բոնելլի,
1831 թուականին, իրենց արեամբ կ'օ-
ծեն արդի կոթող փառքին հիմնաքարերը:
Ասոնք պէտք է նկատուին իտալիոյ Միու-
թեան գործին քաջազուն ռազմիրայները:

Այլ ուր սուրբ կը շողշողայ, գրէն ալ
հոն կը գործէ. մին միւսին անբաման օ-
ժանդակն է: Եթէ առաջինը՝ անատիկ խոշ-
ընդոտներու դէմ փշրի, երկրորդն իսկոյն
կը փութայ փրկարարի նուիրական պաշ-
տօնը ստանձնել:

Կ'ոգևորէ, յորդոր կը կարգայ: Անոր
ձայնէն կ'արթննայ ամօթհաշար, եսասէր
Անտարբերութիւնը: Յեղափոխութիւնը,
ձեան գնտակի նման ուռելով, սպառնական
առ զուրս կը հասնի: Բանաստեղծ ոգին
կը վառէ իսանդն ու Անձնանուիրութիւնը և
ազատութեան դրօշին ծառայող Մատեան
գունդը կը յաղթանակէ վերջապէս վերս-
տին սուրին յանձնելով վճռական ճակա-
տամարտին փառաւոր և վսեմ պաշտօնը:

Ահա այս է իտալիոյ ինքնազատութեան
պատատոհին պատկերացումը ուր կը նշմա-
րուին սարդնիի պակակ գլուխին՝ Ճիու-
զէպպէ Մացցինի և Վինչենցօ Ճիօքերտի:

Գրչին փառանկարն է մուսաներու ան-
մահ դասէն գեղերփնական: Մինչ կ'առի-
բալդի շիկակարմիր կամաւոր գունդին պա-
րագլուխ և Վիկտոր Էմմանուել Բ միւս
կողմէն թշնամեաց դիակները կոխելով ի-
բար դէմ կը յառաջանան միանալու: Պա-
տերազմի դաշտը Italia una գոչուիննե-
րով կը թնդայ:

Ահա այս եղանակով, ոմանք գրչով, ո-
մանք սուրով և կոմս կազմու իր ներհուն
դիւանագիտութեամբ, սանձերը մին միւսին
ձեռքէն առնելով, ամենքը միահամուռ ի-
տալիոյ Ազատութեան յաղթական կառքը
իր վերջնական փառքին առաջնորդեցին:
Նախ և առաջ Միլան քաղաքը ընդվզ-
զումի դրօշակ կը պարզէ: Բրեշիան՝ դիւ-
ցագնօրէն կը դիմադրէ: Վենետիկ, իր նա-
խահարց քաջահամդէս արարքներուն յի-
շատակով ոգևորուած, նորընտիր և վեր-
ջին Տոփին շուրջը կը հաւաքուի: Ընդդի-

մադրութիւնը ամենուրեք է. յուսահատ և մոլեգնոտ:

Ամբողջ իտալիան մէկ սիրով, մէկ նըպատակով կը տոչորի:

Կու լան որդեկորոյս մայրեր, կու լան հարսեր, հոսած արտասուքն ու արիւնը մէկ ակօսի մէջ կը լնանան:

Կախազաններն ու տանջարանները անխնայ կը նահատակեն:

Պատմութիւնը՝ նոր էջ մը բացած է անհամար քաջերու ի յիշատակ տապանաբարեր ոսկեղօրօշելու:

Տխուր և սգաւոր տարիներ յաջորդեցին ինչուան որ փախստական հայրենասերները Ալպեանց ստորտը գտնուող պզտ Պիէմոնտի մէջ հաւաքուելով վերջնական պայքարին վճիռը արձակէին:

Ժամանակն էր նաև որ Սափոյեայի Տան պետը, Սարդենիոյ Արքայն, Պիեմոնտի իշխանը, կրկէս իջնար, որու հօօր աջակից պիտի հանդիսանային Կառիբարլի՝ իր սըրով և Կափուո՝ իր նըբամիտ դիւանագիտութեամբ:

Արդէն Մեծ Ազգաց համակրանքը շահուած էր:

Պրանսա իտալիոյ լատին բոյրը, Ալպեանց սառնամանիքները անցնելով կուգար մէկ դրօշի ներքև պատերազմելու. և 1859ի թուականը իտալ-Պրանսական քաջագործութեամբ փառաւորուեցաւ:

Կառիբարլի իր հազար քաջերու արշաւախմբով Մարսալայի ցամաքը կ'ելլայ: Իտալ մանկտին եռանդնարբոք դէպ ի մահ կը դիմէ, դէպ ի փառք, դէպ ի Ազատութիւն:

Հրդեհը թերակղզւոյն երկու ծայրերէն բռնկիր է. որ տապալելով մի առ մի բռնակալութեանց վերջին դիմադրութիւնները, յաղթանակով կը տարածուի՝ դէպ ի սիրտը, դէպ ի կեդրոն յառաջանալով:

Արդէն իտալական մի քանի կարեւոր գաւառները, հայրենասէր ազատականաց ձեռքն է անցած: Կափուոյի և Նապոլէոնի ընդ մէջ համախուռութիւնը գոյացած է. այլ ևս պատերազմն ու դիւանագիտութիւնը

նը համընթաց կը յառաջանան, ինչուան որ 1861, Մարտ 17ին իտալիոյ Անկախութեան քերդուածը կատարելապէս ամբողջանար:

Կը մնար թագաւոր մը ընտրել Երրորդ իտալիոյ:


Յիսուան տարի առաջ, Տօրինօ քաղաքը, առժամանակեայ մայրաքաղաք որոշուած, իտալական խորհրդարանին առաջին նիստը կը բոլորէր, Պիեմոնտի իշխանը, Վիկտոր Էմանուելը Նոր իտալիոյ սահմանադրական արքայն հռչակելով: Սա իր գահին հետ իսկոյն Հայրենեաց Հօր մակդիրն ալ կ'ընդունի իբր երկրորդ քրաւական մը՝ ժողովրդէն ընծայուած:

Յայտնի էր որ Տօրինոյի, իբր առաջին ոստանի, վայելած այս փառքը վաղանցուկ պիտի ըլլար: Ինչպէս որ հանդիպեցաւ. Հոճմ, անմահ մայրաքաղաքը, իր փառաւոր անցեալովն յաղթանակեց իր նախանձընդդէմին:

Թէպէտ Կափուո, խորհրդարանական առաջին նստին մէջ, «Ազատ եկեղեցի ազատ երկրի մէջ» գաղափարը պարզած էր, սակայն կարծես Կամպիդոլի բարձունքը դիւթիչ հմայք մը ունենային որ քիչ տարի յետոյ Նոր իտալիոյ բանակը Բելիսարիոսի ամրութեանց ներքև պիտի մղէր: Կառիբարլեանց բանակին հանդէպ այդ ծերօն պարիսպները տեղիք տալով տապալեցան և այն օրէն Հոռմը, յաւերժական քաղաքը, արքայանիսա ոստանի նախաւոր տիտղոսը կը վերստանար:

Այս յիսնամեակին առթիւ, ականաւոր անձինքներէ Մամուլին հաղորդուած խորհրդածութիւնները շատ կարեւոր են:

Այդ խորհրդածութեանց ընթերցումէն կարելի է վերլուծել թէ իտալական միուութիւնը իր վերջնական հանգամանքը ստանալու համար տակաւին քայլափոխ մը ունի կատարելու, որ է հաշտ ընթանալ վատիկանի հետ ուր ք առանձնացած կը մնայ Կաթոլիկ Քրիստոնէութեան Սրբազան Պետ մը, Ս. Պետրոսի գերեզմանին վրայ սրտաբեկ խորհրդածելով:



Պատկերը - նկարակարգ Լ. Վիլյուրյանի

Օսմանեան տաղարարը Տուրքիոյ Ցուցահանդէսին մէջ

*
**

Պատմական այս հակիրճ տեսութենէն կարելի է անդրադառնալ թէ ի՞նչ պատճառով Յուցահանդէսը երկու տարբեր քաղաքներու մէջ միեւնոյն ժամանակ կը կատարուի, նոյն իսկ երեք նշանաւոր քաղաքներու մէջ քանի որ Յիրոնիմոսն նաև նշուարչական Յոյցը մը սարքեց վեշտասաներորդ դարուն գեղարուեստը ի հանդէս դնելով:

Սակայն Հոոմ՝ իբր մայր կեդրոն Գեղարուեստի, փափաքեցաւ այս ազգային յիմնամեակին առթիւ գեղարուեստը ներկայացնել՝ թողնելով Տօփնոյի ճարտարարուեստի բաժինը:

Ուստի որքան որ երկու տարբեր Յուցահանդէսներ կը կազմակերպուին, այլ երկուքն ալ մէկ կը յիշուին, մէկ նպատակի ծառայող:

Միջազգային այս Յուցահանդէսին մասնակցող օտար Տէրութիւններն նոյն ծրագրոյն հետեւելով երկու քաղաքներուն մէջ ալ իրենց յատուկ տաղաւարներ կանգնել տուին:

Հոոմայ Յուցահանդէսին օտար տաղաւարներուն խմբակը Վիլլա Բոնկէզի ըստուերախիտ բուրաստանին յարակից զտնուող տեղոյ մը մէջ կը տարածուի, Վիլլա Կարտօնի կոչուած, ուր վաղեմի յիշատակներ թաղուած կան:

Այս պատճառով այսօր Վալլէ Ճիուլիայի անունով կը նախընտրեն յորջորջել, Ճիուլլիո Պապին այդ տեղոյն մօտաւոր գտնուած ապարանքին ի յիշատակ:

Ասկէ յարմարագոյն վայր մը կարելի էր ընտրել:

Շոճիներ և սօսիներ իբր շրջանակ կը բոլորեն, ուրիկից անդին լրթագոյն լեռնաշղթայներ իբր յատուկ հորիզոնին վրայ կ'ուրուագծուին:

Հոոմէական դաշտավայրին սեփական պատկերներն են, դալարագեղ դաշտանկարներ, անջրդի կանաչ հեռուարութիւններ՝ խորհրդաւոր և տպաւորիչ, որոնց նմանը

չեմ ճանչնար որպէս զի յիշեցնէի ընթերցողին:

Օտար տաղաւարներու այս բաժինը, նորաշէն լայն պողատայով մը, նմանապէս նորակառոյց Պլամինեան կամուրջէն անցնելով Տիրբը գետէն հանդիպակաց ասփունքին հետ կը միանայ: Յուցահանդէսին երկրորդ բաժինը կամրջագլխէն կ'սկսի Մառու լեռան ստորե գտնուող piazzad'armi ն գրեթէ ամբողջապէս գրաւելով:

Ուստի Տիրբի ջուրց վայրէջին ձախակողմը՝ օտարաց և աջակողմը՝ իտալական զաւառներուն կը պատկանի, ուր իւրաքանչիւրը՝ իր մասնաւոր տաղաւարով կը ներկայանայ:

Օտարներու բաժինը ամբողջացած է և բացումն ալ կատարուեցաւ, իտալոյ թագաւորութեան յիմնամեայ հռչակման տարեդարձին օրը: Գաւառներուն բաժինը, որ ասելի պէն և ընտիր է, պիտի ուշանայ տակաւին:

Առ այժմ կ'իշխեն հոն, մտից յաղթական կամար մը և կեդրոնական մեծդիշէնք մը սիւնազարդ և արձանազարդ, ուր թեւաւոր երիվարներ, պղնձաձոյլ բովեր և Հոոմուլտի կաթ տուող գայլն ու խառն ի խուռն զուարթ խնդում մը, ամենքն ալ Մայր Հոոմայ անցեակին յատկանիշ յիշատակներ:

*
**

Ոչ նուազ գեղեցկայարդար կը հանդիսանայ Տօփնոյի Յուցահանդէսին պատկանելի ամբողջութիւնը, որ այս անգամ Պօյի կրկին գետեզրին երկայնութեամբ մօտաւոր 5 հազարամետր կը տարածուի:

Վալէնտին անուն հասարակաց պարտէզին տեղն է որու սաղարուախիտ ծառաստաններուն մէջէն յիսուռէն ասելի գմբեթունակ շէնքեր վայելչօրէն կը բարձրանան:

Շրջանակնիս հոս կը տարբերի, դարեւոր, հովանոցաձև շոճիներ չի կան: Սառնամանայ լեռնաշղթայներ պսակ կը բոլորեն հորիզոնին վրայ ցցուած: Սահմանագլխին մօտ ենք Մօնտէ Բիանկոյի և

Մժտէ Ռօզայիւի ստորեւ, լեռնակողերու վայրէջին խորը պատասպարուած, երկու գեւտերու խառնուրդին դաշտավայրին մէջ:

Գեղարուեստի կարեւորութեան կողմանէ նաև Տօփինոյի տաղաւարներն աւելի հոյաւհապ և լայնանիստ կը հանդիսանան, այնպէս որ առ այժմ դժուար է մրցանակ մը որոշել:

Այլ կանխաւ կարելի է գուշակել որ Տօփինոյի կտիտի գերագնայէ: Արդէն ինչ հարկ կար Հոռմայ մէջ Յուցահանդէս կարգակերպի: Միթէ Հոռմը կենդանի է մշտնջենաւոր ցուցահանդէս մը չէ. ուր կը ցումնայ առնուազն 30 դարու պատմութիւն մը:

Պօ գետին ջուրց վայրէջին աջակողմեան գետեզրին վրայ, — Ումբէլայոյի կամուրջէն սկսելով, Իզարեւլայի կամրջին միջև — տասնումէկ տաղաւարներ գրեթէ յարաշար կանգնուած, կանաչորակ ջուրին մէջ կ'անդրադառնան, իրար մէջ ցուացնելով գմբեթներ, եռանկիւնի ճակատներ, զարդն ու անդրիագործութիւնը:

Միւնամբարձ վայրագաւիթք, աշտարակաձև վերջաւորութիւնք, դրասանգք, վահանակք, գերման տաղաւարն ու Ֆրանսական զինադրօջ գետին անվրդով մակերեսին մէջ կը ձուլուին, կը հաշտուին մէկ երանգապնակի մէջ հալելով:

Իզարեւլայի կամրջէն անդին, երկու եզերքին վրայ հաւասարապէս, Յուցահանդէսը կը շարունակէ, իբր հակա վերջակէտ ունենալով Պիլժնիտոյի վայրին վրայ կանգնուած, ընդարձակ շինութիւններ, որոնք Մովային և Պատերգմական նախարարութեանց կը պատկանին:

Այս լայնանիստ կմախքին մեծ սրահին մէջ Քաղաքապետութիւնը Մարտ 17ին օրը մեծաշուք ճաշ մը սարքեց հին Սարտենիոյ և Պիեմոնտի պատկանող 1600 քաղաքապետաց ի պատիւ: Այսքանը բաւ է սրահին ընդարձակութեան մասին գաղափար մը կազմելու:

Տօփինոյի Յուցահանդէսին վրայ կարճառօտ խօսելէս առաջ, չի մոռնամ յիշատակել որ այս առթիւ կառուցուած տա-

ղաւարներուն յատակածեւրու գումարը 400000 քառակուսի մետր կ'ամրոցվանայ. թէ Յուցահանդէսին զրաւած գետինը 1¹/₂ միլիոն մէտր կը հաշուի:

Նորակերտ քաղաք մը՝ ուրիշ բան չէ. վաղանցուկ շինութիւններ, ոսկեզօծ գունտերով, զանէ արձանագործութեան բացօթեայ թանգարան մը. դատասպարուած գեղակերտներ, որոնք ինչպէս սունկերու նման ծառաստաններուն շուքէն վեր բուսան, նոյն արագութեամբ, Նոյեմբեր ամսոյն պիտի քանդուին հետախաղաղ: Երկու քարաշէն կամրջին միջև, երկայարկ փայտաշէն, գաճածեփ զարդերով պնծեալ, նոր կամրջի մը շինութիւնը աւարտելու մօտ է. որ պիտի առաջնորդէ արուեստական ջրվէժներու հոյակապ շինութեան մը: Կիսաւարտ կամրջին վրայ յիսուսի մօտ յաղթական սիւներ կը կանգնին. իւրաքանչիւրին խոյակին վրայ հրեշտակներ կը թևածեն, շրջափրկ պսակ սրակելով՝ թիթեռնիկներուն թռիչք մ'է թրթռուն, ուրախ պար մը խօլական, օղաթուղիկ վերաթնոց պար մը Ջրվէժներուն երկուստեք, կամրջագլխին ալ ու ձախ, կ'սկսին Ֆրանսան և Գերմանիան, երկուքին ալ տաղաւարները գմբեթագարդ, հոյակապ:

Մին գերման սաղաւարտով վերջացած, միւսին ճակտին վրայ liberté, egalité et fraternité վերնագիրը:

Ֆրանսային քով կը գտնուի, դրացի Ռեճիկան, որմէ յետոյ Ռեզիլ, Ուրուկուայ, Էքուատոր և վերջագլխէս Արճէնտինի Հասարակատնութեան գեղեցիկ և ընտիր ճաշակով կերտուած տաղաւարը:

Գերմանիոյ երկայն շէնքին կը յաջորդէ Ամերիկեան Միացեալ Նահանգներուն տաղաւարը, որու քով սիրուն և եզական ճաշակով Սիամի շալէյանման շինութիւնը, դեղին տանիքով և վերջագարդով որ իր օտար ոճով և ուրուագծով, աջակողմեան այդ շարքէն իսկոյն դուրս կը ցայտէ, նա մանաւանդ մերձաւոր Սեբպին եկեղեցական գմբեթիկներուն քաղաքամասը:

Այս վերջինը, ներքնապէս յաջող կերպով տամկանկարուած է: Այդ գետեզրին

պողատայն շարունակելով վերոյիշեալ Պիլսոնէտոյի շինուածախումբին կը տանի, որմէ առաջ կը հանդիպինք արևելեան գիւղի մը փայտակերտ նմանութիւնը: Այս գեղայօրէն շրջանակուած գետեզրին ետև արևակէզ դարևանդներ իրար վրայ կը բարձրանան: Հովասուն ամարանոցներու վայրեր են արևմուտքի ծիրանեզոյն վերջածայրներէն ոսկեզօծեալ:

Հանդիպակաց ձախ ծովեզրին վրայ կը տարածուի վալենտի պարտէզը. ուր կը գտնուին իտալական բաժնին հետ մի քանի օտար. ազգաց կարևոր տաղաւարները: Ասոնց մէջ առաջնակարգ է Անգլիացին և յետոյ, Ռուս, Հունգարք, Ճարոն և Օսմանեան կայսրութիւնը:

Ելեկտրաշարժ հանրակացքերը ամեն կողմէն կը հասնին Յուցահանդէսին երեք Մուտքերուն առջև, որոնց կեդրոնականը Ամիդէօ իշխանին ձիարձան յիշատակարանին առջև բացուողը կը նկատուի:

Այս մուտքը նորոն ճաշակով, կիսաբուր յատակով ծրագրուած է, որուն երկուստեք կը գտնուին, ձախակողմը հելուտական բաժինը. միւս կողմը՝ ելեկտրականութեան վերաբերեալ մեքենայները:

Անգլիական տաղաւարը, եթէ չեմ սըխալիր, 17000 մետր քառակուռի տեղ գրուած է. իր առջև կը գտնուի գեղարուեստական աղբիւր մը որու շուրջը կիսաբուր կը ծաւալի տաղաւարին կեդրոնական մասը:

Իր առջև գտնուող մայրիներու անտառիկը և կանանչազգեստ մարգագետինը, Ռիտանական Տէրութեան կողմանէ նախապէս վարձուած է ուրիշ տաղաւարներու կառուցումը արգիլելու նպատակով: Անգլիոյ և ելեկտրական բաժնին միջև կը գտնուի Մամուլի շէնքը, չիմէնտաշէն, գմբեթառ:

Ռուրակամար աղեղ մը կը գծէ իր ճակատը. հսկայ և խիզախ կերտուած մըն է, թէպէտ տակաւին կիսաւարտ:

Մեծ պողոտային ծամածուռ շրջմունքէն կղզիացեալ մարմանդին մէջ կը զբոսնուի Օսմանեան կայսրութեան սեփական

տաղաւարը, արևելեան ոճով ծրագրուած:

Երկուստեք դալար անտառիկներ իրեն շրջանակ կը բուրնեն: Իետնին դիրքը բարձր մնալով՝ մեր դրացի Ռուսի տաղաւարին կ'իշխենք. կիսով մ'ալ յոխորտալով արևակերտ Միջնադարեան ղղեակին որ մեր մայր ճակատին կողմնակի ընդդէմ կը բարձրանայ իր ատամնաշար ժանիքներով և կամարազարդ պսակումով:

*
*
*

Օսմանեան կառավարութիւնը սկզբան մտադիր էր Երկու Յուցահանդէսներուն ալ հասաարագէս մասնակցիլ և այս երկու շինութեանց համար յատկացուցած էր 3000 Օսմ. ոսկւոյ գումար մը:



Ալի Ռիզա Պէյ. — Ali Rıza Bey.
Commissaire Général Ottoman à l'Exposition
Internationale de Turin 1911



Ասպետ Ալպեր Պէյրոյ •
Mr. le Chevier Officier Albert Peyrol
Commissaire honoraire Ottoman à l'Exposition
internationale de Turin 1911

Սակայն վերջին որոշողութիւնը Յու-
նուարին մէջ տրուելուն պատճառաւ դը-
ժուար էր երկու ծրագիրներն ալ միանգա-
մայն իրագործել:

Արդէն մեր նորակազմ Տէրութիւնը գե-
ղարուեստի կրկէսին մէջ, օտար ազգաց
քով պատշաճօրէն ցուցադրելու տակաւին
պատրաստուած չըլլալն ալ պատճառներէն
մին եղաւ որպէս զի Հոռմը զանց ընելով
միայն Տօսինոյի բաժնին մասնակցումին
որոշողութիւնը տար:

Արդի մեր տաղաւարը, ընդ ամենը 400
քառ. մետր տեղ կը զբաւէ: Ունի բաւա-
կան ընդարձակ կեդրոնական սրահ մը,
իւր չորս թիւերով աւելի բարձր, քան ան-
կիւններուն վրայ կազմուող չորս սենեակ-
ները, որոնց մին Commissaire ին յատ-
կացեալ է:

Մնացեալ ընդարձակութիւնը 22 Յու-
ցադրավայրներու բաժնուած է, որոնց մե-
ծամասնութիւնը արդէն վարձուած են:

Ներքին կանոնադրութիւնը, որ կեդրո-
նական Comitéէն մեզ հաղորդուած է,
շատ խիստ է և լրջօրէն խմբագրուած:

Ոչ ոք իւր Յուցադրած առարկայն իւր
տեղէն հանելով կրնայ ծախել:

Միտելու արտօնութիւն կայ, բաւ է
համակերպիլ ներքին կանոնագրին խիստ
պայմաններուն, որոնցմով լոկ կարելի է
արգելուլ սովորական զեղծումները և շու-
կայիկ անպատեհութիւնները: Միայն այն
անձերը կրնան ցուցադրել որոնք իրենց
ընկավայրին վաճառականական Սենեա-
կէն իբր արտադրող – արուեստաւոր վա-
ւերացուած են:

Ամէն ճարտարուեստի մասնաճիւղէն եր-
կու առաջնակարգ Տուները միայն պիտի
ցուցադրեն, որով տաղաւարը ուրիշ ան-
զամներու նման միայն գորգերով չի պիտի
ծեփուի. այլ ըստ կարելւոյն օսմանեան
հողին արտադրութեամբ կահաւորուած:

Այս խիստ կանոնապահութիւնը վստահ
եմ որ մեր տաղաւարին վերատեսուչը Ալի



Փրոֆ. Լեօն Կիրեղեան
Prof. Léon Gurékian
Ing.-Architecte, auteur du Pavillon Ottoman à
l'Exposition internationale de Turin 1911

Բիզա պէյ էֆէնտին, Անկոնա քաղաքին համարելի հիւպատոսը, կէտ առ կէտ պիտի գործադրի տայ:

Ազնիւ և գործունայ անձ, Խաւիլոյ այլ և այլ քաղաքներուն մէջ պաշտօնավարելով, արդէն Բիզա պէյ փորձառու հատուցեալ մը տիրացած է. ինչպէս իտալական կենցաղին և ճարտարարուեստին նկատմամբ գիտակցութեանը:

Իրեն իբր օգնական որոշուած է, պատուակալ Commissaire տիրադատով, Տօհնոյի պատուական օսմանեան հիւպատոս պապեա Ալբերտ Պէյաօ, պիեմոնտեան շրջանակին մէջ ծանօթ անձնաւորութիւն մը որուն մի եղբայրը, Տօհնոյի երեսփոխան ընտրուած էր:

Տաղաւարին ճարտարապետութեան հեղինակն ու շինութեան հսկիչն ալ այս տողերը գրողն է:

Յուաւի է որ պիւտճէին անձուկ վրնակը չի թոյլատրեց որպէս զի մեր շէնքն ալ արեւելեան վայելուց գմբեթով մը պըծնայորէն ամբողջանար:

Որովհետև Տօհնոյի այս անգամուան Յուցահանդէսը վայել է Գմբէթներու Յուցահանդէս անուանել:

Միայն մենք և Ռուսիան զարտուղութիւն կը կազմենք:

Մեծ ու փոքր, ամենքն ալ ոսկեցնցող կը զոգանան, մենք ալ կը զոհանանք յառաջակարկառ պսակ քիւրնուս երկու կանգուն ցոկուով և ծակոտկէն հիւսկէններով, որոնք ստոնքը այնքան սիրելի և չքնաղ տարբեր համարուած էին մեր քաջարուեստ Պալեաններէն, նա մանաւանդ անմահ Յակոբ Պէյէն որ կը մնայ պարծանք Հայութեան և արեւելեան գեղարուեստի վերածնունդին:

ԼԵՒՈՆ ԿԻՐՈՎՆԻՍ

Հոտ 18 Ապրիլ 1911



ԳԻՐՔԵՐ ՈՒ ԹԵՐԹԵՐ

Ե. Ֆրանգեան, Պեսալիիզմի փիլիսոփայ, Երևան, տպ. և Ֆ. Նիգջէ հրատարակուած է ճերմ փիլիսոփայութիւն, Թիֆլիս, Հերմէս, 1910. Ազգագրական Հանդէս 1910 թիւ 2.

Շօպէնատէր և Ֆ. Նիցշէ, երկու վերջին հատորները Պ. Երուանոյ Ֆրանգեանի. ծաւալով փոքր այս գրուածները, - առաջինը 160 էջ, երկրորդը 96, բայց բովանդակութեամբ ընտիր. Ֆ. Նիցշէ հրատարակուած է ճերմ մահան տանամանակի առթիւն Շօպէնատէրը ճերմ մահան յիսնամակի առթիւն, կ'երեւի թէ պ. Ֆրանգեանի համար այս գոյգը իր սիրած հեղինակներու կարգն են, և զանոնք կը յիշատակէ, կը սօժէ:

Երկու գրուածներն ալ նոյն ծրագրին վրայ աշխատած են, Ասոնց ապաւորութիւնը կ'ընեն համալսարանականի մը թէլզիսին, լաւ սուսնաւորուած:

Իւրաքանչիւր հատորին սկզբը գիտեցուած է ուսումնասիրուած անձին պատկերը, որ առաջին ու անմիջական ապաւորութիւն մը կ'ընէ իրենց անձնաւորական կենսոյ նկարագրին. Շօպէնատէր տխուր յոյզերու տակ ընկճուած մըն է, որուն միտնափայլ ալիքը միայն սպիտակ վարդերու փայլ մ'ունին: Նիցշէ իսկոյն ենթ ներկուտ և արինուլից կենսոյ մը աստիճանի մը մէջ կը յայտնուի որ զրեթէ անարկու է և աղիտարբեր. կենսոյ պարհնով զեղծ է, պարզատուտ մտ. ինչպէս ազնիւ զինիով լեցուն տիկ մը: Սովորական հոգիներ իրեն զիմաց կ'ընկճուին:

Շօպէնատէր և Նիցշէ, - երկու հատորներն ալ, կը բացուին նախերգանքով մը ուր Ֆրանգեան ընտրեցական շեշտ մը առած է. նա ուզած է գուցէտար ու խիտ զրեթով պատկերել այս երկու խորոզ բանաստեղծ իմաստասէրներու հոգեւոյն այն աճողը ինչ որ մերէն պէտք վերածէ:

Ֆրանգեան Շօպէնատէրի համար կը գրէ թէ «ամբողջ մի դար ունի իր թիկնոցին նրա գուրու-գործոցը, Աշխարհը, որպէս կամք և պատկերացում»:

Բայց նախերգ. մեզ քսածտող այցեան երկար ժամանակաշրջանին, այժմ մեր փիլիսոփան ոչ միայն չի մտաուշել, այլ դեռ պատկառում է ժողովրդական և կարգացող փիլիսոփաների շարքին»:

Յետոյ կը հարցնէ «բայց ի՞նչն է ապա նրա փիլիսոփայութեանը մնայուն բնութիւնը»:

Ու ինք պատասխան կու տայ՝ որովհետև «Շօպէնատէրի հիմնական թեման կազմուած էր կենսոյ»:

Նոյն հարցերը ասելի խանդով, երանդով ու գորովով գրուած են նաև Նիցշէի գրեաց:

«Ո՛վ լինանալու՜մ Նիցշէին, այդ ուղադար և հետաքրքրական դէմքին, այդ խիզար և ըմբոստ ոգուն»:

Նա մի ժամանակ, շատ ժողով անցեալում իր վրայ էր բեռնել մարդկութեան լաւագոյն ուղադրութիւնը: Նա չէր կարդացուած, այլ կ'անուած էր, նրան անգիր էին անում», Շարունակակի